

Արարատի մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի 100-օրյա աշխատանքային գործունեությունը

19.08.2014



ՀՀ Արարատի մարզպետ Ռ. Աբրահամյանն իր պաշտոնավարումն սկսելով 2014 թվականի մայիս ամսից՝ նախ ձեռնամուխ է եղել մի շարք կարևորագույն մարզային հիմնախնդիրներին հրատապ լուծումներ հաղորդելու ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:

Արդեն իսկ մեկնարկած գյուղատնտեսական տարին պահանջում էր մարզպետի հետևողականությունն ու հոգատարությունը գյուղացիական տնտեսությունների նկատմամբ: Գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպմանը զուգահեռ անհրաժեշտ քայլեր ձեռնարկվեցին վաղ գարնանային ցրտահարության հետևանքները մեղմելու և գյուղացիներին օգնելու նպատակով ազոտական, կալիումական, ֆոսֆորական պարարտանյութերի, ինչպես նաև վառելիքի, սերմացուի ներկրման աշխատանքների պատշաճ կազմակերպման և վերջիններիս բաշխման հասցեականության ապահովման նպատակով:

Արարատի մարզպետն իր պաշտոնավարման մեկնարկային պահին, ոռոգման տարեշրջանը բարեհաջող սկսելու նպատակով, կազմակերպեց խորհրդակցություն՝ մարզի ջուր օգտագործող ընկերությունների ղեկավարների մասնակցությամբ:

Խորհրդակցության ընթացքում հստակ նախանշվեցին այն հիմնական առաջանահերթությունները, որոնք պետք է նպաստեին մարզի համայնքներում ոռոգման նպատակով անհրաժեշտ ջրամատակարարում ապահովելուն:

Այս գործընթացին անմիջապես հաջորդեց Արարատի մարզպետի հրավերով ՀՀ

Գյուղատնտեսության նախարարի այցը մարզ՝ կարտոֆիլի և լուլիկի վնասատուների դեմ պայքարի միջոցառումը համատեղ ուժերով կազմակերպելու համար:

Գյուղատնտեսության ասպարեզում արդյունավետ գործընթացներ կազմակերպելուն միտված այս այցելության արդյունքում որոշվեց տեղադրել ֆերոմոնային թակարդներ, ինչի շնորհիվ այս տարի մարզը ստացավ կարտոֆիլի և լուլիկի առատ բերք :

Մարզում բարեհաջող կերպով իրականացվեց նաև հացահատիկի բերքահավաքի կազմակերպումը հարթավայրային, նախալեռնային և լեռնային գոտիներում:

Այս ընթացքում Արարատի մարզպետի գործունեության առանցքը դարձավ նաև մարզի համայնքների ամենատարբեր ենթակառուցվածքների նկատմամբ ուշադրության ցուցաբերումը: Մարզի համայնքներ կատարվող պաբերական այցելությունները, բնակիչների հետ շփումներն ու քննարկումները նպաստեցին համայնքանպաստ որոշումների կայացմանն ու համայնքային շատ հիմնախնդիրներին հրատապ լուծումներ հաղորդելուն:

Ասվածի լավագույն օրինակ կարող է համարվել Այգեպատ համայնքում ավարտին հասցված 2.3 երկարությամբ ոռոգման ջրագիծը, ինչը նպաստեց 110 հա հողերի լիարժեք ոռոգմանը, որոնք տարիներ շարունակ չէին ոռոգվում կամ ոռոգումը կազմակերպվում էր ոչ լիարժեք: Հավելենք, որ

աշխատանքներ են տարվում մարզի 67 հակակարկտային կայանները երկրորդ շարքով համալրելու ուղղությամբ:

Համայնքային այցելությունների ընթացքում մարզպետն այցելել է համայնքային ենթակայության տարբեր կազմակերպություններ. մշակույթի տներ, մանկապարտեզներ, գրադարաններ և այլն:

Արդյունքում լուծումներ են տրվել համանման կառույցներում առկա շատ խնդիրների:

Մարզպետի այցելությունների ընթացքում տրված հանձնարարականի արդյունքում հիմնովին լուծվեց Արտաշատի թիվ 5 մանկապարտեզի ջեռուցման հիմնախնդիրը, որը հնարավորություն կտա ձմռան ամիսներին այս նախակրթարանի սաների պարապմունքները կազմակերպել տաքացվող սենյակներում: Շատ հիմնախնդիրների լուծումներ էլ դեռևս առջևում են:

Ամռան ամիսներին Արարատի մարզպետի ուշադրության կենտրոնում էին նաև մարզի մանուկներն ու վերջիններիս ամառային հանգիստը կազմակերպելու աշխատանքները:

Մարզպետի կողմից խրախուսվեցին բակային ճամբարների ձևավորման աշխատանքները:

Արարատի մարզպետ Ռ. Աբրահամյանն անձամբ մասնակցեց Բուրաստան համայնքի բակային ճամբարի բացմանը:

ՀՀ Կառավարության կողմից տրամադրված համապատասխան ֆինանսավորման արդյունքում <<Հեթիաթային կիրճ>> մանկական առողջարարական ճամբարում իրենց ամառային հանգիստն անցկացնող երեխաները մեծագույն ոգևորությամբ ընդունեցին Արարատի մարզպետի անակնկալ այցելությունը:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ մարզպետը հանդիպում ունեցավ Խարբերդի մասնագիտացված մանկատան կոլեկտիվի և երեխաների հետ:

Արարատի մարզպետի կողմից իրականացվող մարզային գործընթացների առանցքում էին կրթության բնագավառի հիմնախնդիրները: Նախորդ ուսումնական տարվա ավարտն ու գալիք ուսումնական տարվա մեկնարկը պատշաճ կազմակերպումը դարձան մարզպետի կողմից ոլորտի պատասխանատուներին տրված հիմնական հանձնարարականները՝ մարզում որակյալ կրթություն ապահովելու գերակա շեշտադրումներով:

Ռ. Աբրահամյանն ընդունեց դպրոցականների հանրապետական օլիմպիադայի հաղթողներին՝ նրանց արժանացնելով համապատասխան խրախուսանքների և պատգամելով, որ այսուհետ ևս ամենատարբեր օլիմպիադաներում պետք է կարողանան բարձր պահել իրենց մարզի պատիվն ու հեղինակությունը:

ՀՀ Վարչապետ Հ. Աբրահամյանի Արարատի մարզ կատարած աշխատանքային այցելության շրջանակներում ՀՀ Վարչապետն ու Արարատի մարզպետը եղել են նաև մարզի միասնական քննական կենտրոններում, գրուցել միասնական քննությունների մասնակցող շրջանավարտ-դիմորդների հետ:

Մարզային առօրյան լեցուն էր նաև մարզա-մշակութային բազմաթիվ իրադարձություններով:

Բնագավառում առկա խնդիրները մանրամասն դիտարկելուց հետո՝ Արարատի մարզպետը ոլորտի պատասխանատուների հետ քննարկեց մարզի մշակույթի և սպորտի բնագավառների նորովի լիցքեր հաղորդելուն միտված մի շարք առաջնահերթ ծրագրեր:

Այս ամենին զուգահեռ կազմակերպվեց այցելություն Պ.Սեւակի տուն-թանգարան, կից կառուցվող Չանգակատան շինարարական աշխատանքների ընթացքին տեղում ծանոթանալու նպատակով:

Մարզպետ Աբրահամյանը մասնակցեց նաև <<Պոեզիայի օր>> միջոցառմանը, որի ընթացքում ևս արվեստագետների հետ նախանշվեցին մարզում նորովի մշակութային ավանդույթներ կերտելու նպատակով տարաբնույթ նախաձեռնություններ ցուցաբերելու կարևորությունները:

Արարատի մարզի արտաքին շփումները ևս համարվեցին առաջնահերթ ուղղություններ:

Արարատի մարզպետը հանդիպեց Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի

հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ս. Սուխորենկոյի հետ՝ քննարկելով

Բելառուսի Հանրապետության վարչատարածքային միավորների հետ նոր շփումներ ձևավորելու

հնարավորությունները: Այս հանդիպման ավարտին Արարատի մարզպետն ու դեսպանը

Բելառուսի ազատագրման 70-ամյակի կապակցությամբ մեղալներ և պատվոգրեր հանձնեցին

Բելառուսի ազատագրման մասնակցած մարզի վետերաններին:

Մարզպետի հանձնարարությամբ հանգամանորեն վերլուծության ենթարկվեցին մարզի առողջապահության բնագավառի գործունեության ուղղությունները, որի արդյունքում պետք է մշակվեն ու իրագործվեն մարզի բնակչության համար առանցքային կարևորություն ունեցող այս բնագավառի զարգացման և արդյունավետության լայնամասշտաբ ծրագրեր:

Բուժաշխատողների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվեց մարզի բուժաշխատողների ընդունելություն և պարգևատրում, որի ընթացքում Արարատի մարզպետը հերթական անգամ կարևորեց մարզի բնակչության համար որակյալ, ժամանակի պահանջներին համահունչ և հոգատար բուժսպասարկում կազմակերպելու հանգամանքը:

Առողջապահության համակարգի արդիականացմանը միտված ձեռնարկները քննարկվել են նաև ՀՀ Առողջապահության նախարարի մարզ կատարած այցելության շրջանակներում:

Ամառային զորակոչի նախապատրաստական աշխատանքները բարեհաջող կազմակերպելու նպատակով կազմակերպվեց հանդիպում տարածաշրջանային զինկոմիսարիատների զորակոչային հանձնաժողովների հետ՝ վերջիններիս աշխատանքների ընթացքը քննարկելու նպատակով:

Առանձնահատուկ ուշադրություն է ցուցաբերվել մարզի հոգևոր հատվածում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ: Նորաբաց համայնքում տեղի է ունեցել Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու Օծումը՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ:

Մարզպետը մարզի Բարձրաշեն համայնքում մասնակցել է Սուրբ Համբարձում եկեղեցու հիմնարկեքի արարողությանը:

Ռ. Աբրահամյանը մասնակցել է նաև ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից իրականացվող «Արի տուն» ծրագրի հերթական փուլերից մեկի փակման արարողությանը՝ սփյուռքահայ երիտասարդներին հայտնելով մարզում մշտապես նրանց հյուրընկալելու

պատրաստակամություն: Ծրագիրը մարզում բարեհաջող իրականացնելու համար մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը արժանացել է Սփյուռքի նախարարի պատվոգրի:

Մարզպետարանի վերջին գրեթե 100 օրերի գործունեության մաս են կազմել մարզի տնտեսական ցուցանիշների հստակ վերլուծությունները, որոնք դարձել են ՀՀ Արարատի մարզպետի ընթացիկ հաշվետվության հիմքը և ներկայացվելու են հանրությանը: Մարզային գործընթացների կարևորագույն բաղադրիչ են համարվել նաև ինչպես ՀՀ Կառավարության կողմից տրամադրված հրատապ ծրագրերի, այնպես էլ պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքները, որոնց որակյալ և պատշաճ կազմակերպումը եղել և մնում է մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին Արարատի մարզպետի կողմից տրվող ամենօրյա հանձնարարականների հիմնական ուղղությունը:

Մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը մեծապես կարևորել է հրապարակային ու թափանցիկ աշխատանքը, ինչպես նաև մարզպետարան-մարզի բնակիչներ սերտ կապի ապահովումը:

Պաշտոնավարման առաջին օրը Արարատի մարզպետարանում Ռուբիկ Աբրահամյանի ջանքերով ստեղծվել է «Թեժ գիծ», որը լավագույն հնարավորություն է մարզի շատ բնակիչների կողմից բարձրացվող հարցերին հրատապ արձագանքելու և համապատասխան աջակցություն ցուցաբերելու հարցում:

Մարզպետը պարբերաբար կազմակերպել է քաղաքացիների ընդունելություններ, որոնց ընթացքում ևս լուծումներ են ստացվել բազում և բազմապիսի սոցիալական խնդիրներ:

Այս ամենով հանդերձ հարկ է նկատել, որ առկա են մարզի շարունակական զարգացմանն ու մարզային ամենատարբեր ենթակառուցվածքների աշխատանքների կատարելագործմանը միտված ընդգրկուն ծրագրեր, որոնք կյանքի են կոչվելու առաջիկայում: